Ուրբաթ, 11 մարտի 2011թ.

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 9 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 30 մանկապարտեզի մարզահրապարակի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Լուսաձոր գյուղի տոհմային կովաբուծարանի մասնակի վերանորոգում» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի նոր միջնակարգ դպրոցի կառուցման նախագծում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի նոր մասնաշենքի կառուցում» ծրագիրը,

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրգանական բանջարեղենի մշակության փորձացուցադրական ուսումնական կենտրոնի հիմնում» ծրագիրը,

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Բաղրամյան փողոցի վրա գտնվող հանրապետական հիվանդանոցի նոր մասնաշենքի կառուցում և կահավորում» ծրագիրը,

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում իրականացվող ծրագրի մասին» ծրագիրը,

«Սի.Օ.Էյ.Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: